ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ Ն.
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

11 սեպտեմբերի 2024թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (դատավոր Կ. Արզումանյան) (այսուհետ՝ Դատարան),

քննելով ըստ հայցի «Ագաստ» ՍՊԸ-ի ընդդեմ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 15.07.2024 թվականի թիվ 301 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Դիմելով Դատարան՝ «Ագաստ» ՍՊԸ-ն խնդրել է անվավեր ճանաչել «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 15.07.2024 թվականի թիվ 301 որոշումը՝ «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:
Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումը 06.09.2024 թվականին մակագրվել է Դատարանին:
(1) Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
(2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված

պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից պետք է պահանջել «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 15.07.2024 թվականի թիվ 301 որոշման հիմքում ընկած փաստերը հաստատող ապացույցները:
Միևնույն ժամանակ Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանողը կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 199-րդ, 200-րդ, 410-414-րդ հոդվածներով, 27.2-րդ գլխի կանոններով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից պահանջել «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 15.07.2024 թվականի թիվ 301 որոշման հիմքում ընկած փաստերը հաստատող ապացույցները:
3. Գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել

2024 թվականի հոկտեմբերի 18-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:
Որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ secretariat@minfin.am:

Դատավոր՝ Կիմա Արզումանյան

Digitally signed by
ARZUMANYAN KIMA 6307860855
Date: 2024-09-11 13:43:58

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am